



պիտի ըլլաս: Երբ արեւահար ըլլաս, պատասխանատուն անդրմանիշակագոյն Բ. ճառագայթներն են: Սակայն անդրմանիշակագոյն Ա. ճառագայթները վտանգաւոր եւ աւելի «ծածկամիտ» են. անոնք մորթին խորերը կը թափանցեն եւ բջիջները կը փճացնեն... իսկ անոնց յառաջացուցած վնասները բազմաթիւ տարիներ ետք կը յայտնուին:

ԱՉՔԵՐԸ ՊԱՇՏՊԱՆԵԼ

Արեւուն լոյսը կազմուած է քանի մը տեսակ ճառագայթներ: Կարգ մը ճառագայթներ տեսանելի են, աչքը զանոնք կը նշմարէ. անոնք են, որ առարկաներուն գոյները կու տան:

Աչքերուն համար ալ անդրմանիշակագոյն ճառագայթները վտանգաւոր են: Անոնք կը փճացնեն աչքի սառնենին, որ ժամանակի ընթացքին նուազ թափանցիկ կը դառնայ: Այս հիւանդութիւնը կը կոչուի քաթարաքթ, որ կ'ազդէ տեսողութեան եւ կրնայ կուրցնել: Հետեւաբար անհրաժեշտ է արեւու յատուկ ակնոց գործածել, արեւուն տակ քալած ատեն:

ԱՐԵՒԸ ԵՒ ՄԵՆՔ

Արեւը անհրաժեշտ է երկրագունդին վրայ գոյատեւող կեանքին համար: Անոր ճառագայթները երկրագունդը կը տաքցնեն, իսկ լոյսը՝ մեզ կը լուսաւորէ:

Ամրան, երբ օրերը երկարին, մեր ուղեղը մեղաբանին կ'արտադրէ, որ մոլեքիւլը մեզ կ'ուրախացնէ: Այսպիսով մենք մեզի աւելի լաւ կը զգանք:

Արեւը մեզի կու տայ նաեւ ջերմութիւն, սակայն մեր մարմինը կը քրտնի: Մեր մարմինին ջուրը կրնայ պակսիլ: Հետեւաբար պետք է միշտ ջուր խմենք:

Արեւը կ'օգնէ նաեւ մեր աճումին: Մեր մարմինը պետք ունի անոր անդրմանիշակագոյն ճառագայթներուն՝ տոկոն ոսկորներ ունենալու համար, ինչպէս նաեւ անհրաժեշտ է D կենսանիւթը ապահովելու համար: Անոր համար օրական 15 վայրկեան բացօթեայ տեղ երթալը բաւարար է:

ՈՉ ԵՐԿԱՐ ԺԱՄԱՆԱԿ

Արեւուն անդրմանիշակագոյն ճառագայթները երեք տեսակ են՝ անդրմանիշակագոյն Ա., անդրմանիշակագոյն Բ. եւ անդրմանիշակագոյն Գ.: Եթէ երկար ժամանակ արեւուն տակ մնաս, այս ճառագայթներուն ազդեցութեան տակ



ԶՄՈՒՆԱՆՔ

- Արեւուն դեմ պաշտպանուելու համար մեծ քանակով սեր քսէնք մեր մորթին, ամէն 2 ժամ անգամ մը: Նոյնիսկ շուքին մէջ մենք արեւուն ճառագայթներէն պաշտպանուած չենք:

- Մանուկներուն աչքերը նուազ պաշտպանուած են արեւուն ճառագայթներէն, քան չափահասներունը: Հետեւաբար չմոռնանք արեւու ակնոց դնել:

- Արեւուն պարզուէ՛ նախընտրաբար առտուն, իսկ կեսօրէ ետք՝ ժամը 4:00-էն ետք:


- Երբ օդը շատ տաք է, նախընտրաբար շուքին տակ մնա՛:

- Արեւուն տակ 30 վայրկեանէն աւելի մի՛ մնար:


- Յաճախ ջուր խմէ՛, որպէսզի մարմինիդ ջուրը չապակսի:

ԹԻՒԸ ՊԱՏՐԱՍՏԵՑ՝ ՄԱՐՄԻՆԻ ԱՇՈՏԵՆ-ՇԱՀԻՆԵՆՆԻ
ՆԿԱՐԱԶԱՐՈՒՅՑ՝ ՈՒՅՅՈՒ ՔԵՇԻՇԵՆՆԻ

1 - 61 թիւերը միացնելով ամբողջացո՛ւր պատկերը, ապա՝ գունաւորէ՛:



Առաջին տնակի օրինակին հետեւելով միւս տնակներուն վրայ դրուած գումարումները կատարէ՛:



ԶԱԳՈՒԿՆԵՐՍ ԿԸ ԳՐԵՆ

ՄԵՐ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆ

Մենք «Կար Ու Չկար» խումբով այցելեցինք «Գանձասար»-ի խմբագրատուն, ուր մեզի բացատրեցին թերթի աշխատանքային ընթացքը: Նաեւ յայտնեցին, որ թերթ կարդալը մեր մտքերը հարուստ գիտելիքներով կը լիցքաւորէ եւ մեր լեզուն կը զօրացնէ:

Գիտե՛ք, որ «Գանձասար» շաբաթաթերթը Սուրիոյ մէջ տպագրուող միակ հայկական թերթն է, որուն ընդմէջէն կը ստանանք հայկական եւ համաշխարհային լուրեր:



Շնորհակալութիւն շաբաթաթերթի խմբագիրին եւ անձնակազմին՝ իրենց հիւրընկալութեան համար: Զրիստ Լեհիմճեան

ԱՅՍ ԱՅՍՊԵՍ ԾԱՆՕԹԱՅԱՆՔ ԹԵՐԹԻ ԳՐԱՏԱՐԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻՆ

Երկուշաբթի, 17 Յուլիս 2023-ի երեկոյեան «Կար Ու Չկար»-ի Յանձնախումբին հետ հաճելի այցելութիւն մը ունեցանք «Գանձասար»-ի խմբագրատուն:

Այնտեղ խմբագիր տիկ. Չարմիկ ՉիլԱբօշեան-Պօղիկեան մանրամասնութեամբ բացատրեց թերթի հրատարակման աշխատանքին փուլերը: Ապա պատմեց, թէ ե՛րբ եւ ինչպէ՛ս թերթը լոյս տեսնել սկսած է:

Ծանօթացանք թերթին բաժիններուն, որոնք կ'ընդգրկեն հայկական, տեղական եւ մարզական լուրեր, յօդուածներ, թղթակցութիւններ եւ մանկապատանեկան բաժին մը, ուր կը ներկայացուին պատմութիւններ ու հաճելի խաղեր:

Շնորհակալութիւն «Կար Ու Չկար»-ի պատասխանատուներուն, որոնք առիթը ընծայեցին այս այցելութեան:

Մէյրի Դեքիմեան

ՀՈՅԱՄՈՂԵՉՆԵՐ ՏԱԿԱԻՆ ԻՐԵՆՑ ԳԱՂՏՆԻՔՆԵՐԸ ԿԸ ԲԱՑԱՅԱՅՏԵՆ


Սկիզբը անոնք յայտնաբերուեցան Ամերիկայի հիւսիսարեւմուտքը, ապա Մոնկոլիայի անապատներուն եւ արեւելեան Չինաստանի մէջ, իսկ հիմա Արժանթինի մէջ ի յայտ կու գան տարբեր տեսակի հոյամողէզներու (dinosaur) հաւկիթներ: *«Միայն անցած տասնամեակին, մենք գտանք տասներկու նոր հոյամողէզներու տեսակներ»*, կ'ըսէ բրաժոններու մասնագետ Ռոտովֆօ Քորիա: Յայտնաբերումներուն մէջ կար երեսունվեց մեթր երկարութիւն ունեցող խոտակեր մը, «Արկեն դինոսորուս» կոչուած, որ կը կշռէր շուրջ 5.000 քիլօ:

Ամենէն հետաքրքրականը այն էր, որ 1997 թուին գիտնականները գտան վայր մը, ուր մսակեր Թիթանոսորուսի հազարաւոր հաւկիթներ պահուած էին: Հաւկիթները կը բացատրէին հոյամողէզներու ապրելակերպը:

Խումբ մը գիտնականներ, որոնք հաւկիթները գտան, վերջերս վերադարձան նոյն վայրը՝ հետազոտութիւններով զբաղելու: Խումբը առաջին օրէն իսկ հաւկիթներ փնտռելով զբաղեցաւ եւ արդէն իսկ երրորդ օրը հաւկիթներուն թիւը 80-ի հասաւ: Հաւկիթները խորունկ տեղ մը գետեղուած էին եւ իրարմէ մօտաւորապէս 3-5 մեթր հեռաւորութեամբ: Կ'ենթադրուի, թէ մայր հոյամողէզներն էին որոնք խորունկը գետեղած էին իրենց հաւկիթները, վախճալով որ անոնք շարժին եւ կոտորին: Նոյնպէս հաւկիթին կեղելը կրնայ տեղեկութիւններ փոխանցել մայր հոյամողէզներուն մասին: Գիտնականները կ'ըսեն, թէ երբեմն մայր հոյամողէզները ճնշումի տակ կ'ըլլան, հետեւաբար, անոնք իրենց հաւկիթները չեն ածեր, զանոնք աւելի երկար ժամանակ կը պահեն իրենց մէջ, ինչ որ պատճառ կ'ըլլայ հաւկիթին վրայ երկրորդ կեղել մը կազմուելուն: Երկու շաբթուան հետազոտութիւններէ ետք, գիտնական Անուար Ժաննօ գտաւ վարդագոյն հոյամողէզի մարմինի անդամներու հետքեր:

Շուրջ մէկ ամսուան ընթացքին խումբը հաւաքեց բրաժոյ ոսկորներ եւ քսան սաղմեր:

Գիտնականներուն կարծիքով՝ տակաւին պիտի շարունակուին յայտնաբերումները, որոնք հնագոյն աշխարհի կենդանական կեանքին մասին նորանոր յայտնութիւններու առիթ պիտի ստեղծեն:



ԿՈՂՄԱՑՈՅՑ ՄԸ ԻՆՉՊԷ՞Ս Կ'ԱՇԽԱՏԻ

Կրնա՞ս անծանօթ վայրէ մը վերադարձի ճամբադ գտնել:

Եթէ կ'ուզես Հիւսիս, Հարաւ, Արեւելք կամ Արեւմուտք երթալ, կրնաս մագնիսաւոր կողմնացոյց մը գործածել, որպէսզի օգնէ քեզի: Մագնիսաւոր կողմնացոյց մը կ'աշխատի, քանի որ երկիրը ունի հիւսիսային եւ հարաւային բեւեռներ, որոնք զօրաւոր մագնիսներ են: Կողմնացոյցի փոքր ասեղն ալ մագնիս է: Նկատի ունենալով, որ հակառակ բեւեռներու որեւէ երկու մագնիսներ զիրար կը քաշեն, երկրի Հիւսիսային մագնիսական բեւեռը իրեն կը քաշէ կողմնացոյցի ասեղը:

Կարմիր սլաքը դեպի Հիւսիս կը դառնայ: Դուն հիմա արդէն կրնաս գտնել տանդ ճամբան:



ԹՈՒՂԹԷ ՏՆԱԿՆԵՐԸ

Ուր որ ապրիս՝ խոշոր քաղաքի, կամ մեծ գիւղաքաղաքի մէջ, այնտեղ պիտի գտնես կառուցուած տուներ: Ոմանք կղմինտրներէ կառուցուած կ'ըլլան, իսկ ուրիշներ՝ աւելի ածան սիւթերէ:

Ռուսիոյ մէջ ժամանակին տարածուած էին փայտաշէն տուները: Իսկ այսօր, Ճափոնի որոշ շրջաններու մէջ կը կառուցուին տուներ, որոնց պատերը պատրաստուած են բարակ փայտի բաժանումներէ եւ իւղապատ թափանցիկ... ԹՈՒՂԹԷ: Ասոր մէջ ոչ մէկ զարմանալի բան կայ. չէ՞ որ Ճափոնի մէջ յաճախ կը պատահին երկրաշարժներ, որոնք բնակիչներուն բազմատեսակ դժուարութիւններ կը պատճառեն:

Թուղթէ շինուած տուները, երկրաշարժի վտանգներէն խուսափելու համար հրաշալի միջոցներ են: Երկրաշարժի ժամանակ նոյնիսկ եթէ թուղթէ բնակարանը քանդուի, ոչ ոք կը տուժէ: Անոր քանդումը ուղղակի կը նմանի խաղաթուղթ տնակի քանդումի սկզբունքին:

